Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 26 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով << քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (13.02.2009թ. մտից թիվ 4-54) վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականությունը:

Դիմումատուն խախտելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի պահանջները՝ չի վճարել պետական տուրք եւ պատշաճ կարգով չի ներկայացրել միջնորդություն այն վճարելու պարտականությունից ազատելու վերաբերյալ:

2. Չնայած «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի սահմանադրականության հարցով քաղ. Ռ.Թորոսյանի դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն արդեն իսկ 27.12.2008թ. ՍԴԱՈ-103 որոշմամբ քննության է ընդունել գործ եւ այդ մասին տեղեկացրել է դիմումատուին, այնուհանդերձ միեւնույն հարցադրմամբ դիմումատուն կրկին դիմում է սահմանադրական դատարան՝ կրկին շրջանցելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի դրույթները, ինչպես նաեւ դատական 2-րդ կազմի որոշումները՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 69 հոդվածների, «Պետական տուրքի մասին» << օրենքի պահանջները պարտադիր կատարելու անհրաժեշտության վերաբերյալ (տե՛ս դատական 2-րդ կազմի՝ 03.02.2009թ., ինչպես նաեւ նախորդ մյուս որոշումները):

3. Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան